

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ, Գ.Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Գ.Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դիտարկվում են տրանսֆորմացիոն տնտեսական փոփոխությունների ազդեցության հիմնախնդիրները: Տնտեսության մեջ դրական փոփոխությունները որոշակիորեն փոխկապված են տեխնոլոգիական տրանսֆորմացիոն տեղաշարժերի հետ, որոնք հաճախ առաջ են բերում տնտեսության կառուցվածքային, որակական փոփոխություններ: Մյուս կողմից՝ շուկայական փոփոխությունները տեխնոլոգիական զարգացման վրա կարող են ունենալ բացասական ազդեցություն: Արդյունքում՝ ակտիվանում է տեխնոլոգիական քաղաքականության արտատնտեսական բաղադրիչը, որը ենթադրում է ընդհանուր սոցիալական նշանակության տեխնոլոգիական ռիսկերի հաղթահարում:

Առանցքային բառեր. տրանսֆորմացիոն տնտեսական փոփոխություններ, ինստիտուցիոնալ ծուղակ, տեխնոլոգիական ինովացիաներ, տեխնոլոգիական ռիսկ, տեղեկատվության ասիմետրիա, բարձր տեխնոլոգիական հատված, ինստիտուցիոնալ մեխանիզմ, տեխնոլոգիական ճեղքվածք:

Տնտեսության մեջ շուկայական փոփոխությունները տեխնոլոգիական զարգացման վրա հաճախ ունենում են բացասական ազդեցություն: Կարող է ստացվել այնպես, որ շուկայական տնտեսության որոշ ինստիտուտներ, արդյունավետ չլինելով, գերակա դիրք գրավեն: Այս առումով գրականության մեջ հաճախ է շրջանառվում, այսպես կոչված, ինստիտուցիոնալ ծուղակի (lock-in) երևույթը: Գրականության մեջ հաճախ ինստիտուցիոնալ ծուղակը դիտարկվում է իբրև արգելափակման էֆեկտ (lock-in effect): Այս առումով Դ. Նորթը նկատել է, թե «դա նշանակում է այն, որ մեկ անգամ ընդունած որոշումը դժվար է փոխել» [1]: Ինստիտուցիոնալ ծուղակը, ինչպես նկատում են նեոինստիտուցիոնալ տեսության կողմնակիցները, «ոչ արդյունավետ նորմ է (ոչ արդյունավետ ինստիտուտ), որն ունի ինքնակարգավորման բնույթ» [2]: Նրա կայունությունը, ըստ էության, նշանակում է, որ եթե համակարգում գերակա է ոչ արդյունավետ նորմը, ապա համակարգը կարող է հայտնվել ինստիտուցիոնալ ծուղակի մեջ ուժեղ տատանումից հետո և այդ վիճակում կմնա անգամ արտաքին ազդակի վերացումից հետո: «Տեխնոլոգիական ոլորտը, - նկատում է Դ. Նորթը, - որն արդեն ընտրել է որոշակի ուղղվածություն, կարող է այլ լուծումների նկատմամբ հանգեցնել տվյալ տեխնոլոգիական լուծման հաղթանակին՝ նույնիսկ այն դեպքում, երբ առաջին տեխնոլոգիական ուղղությունը մերժված այլընտրանքից կլինի պակաս արդյունավետ» [2]:

Արդյունավետ տեխնոլոգիական ձեռքբերումների արգելափակման էֆեկտի դասագրքային օրինակ է QWERTY ստեղնաշարի օգտագործումը, չնայած նրան, որ

արդեն գոյություն ունեն առավել արդյունավետ արտոնագրված ստեղնաշարեր [3]: «QWERTY» էֆեկտի առաջացումը ինստիտուցիոնալիստները մի դեպքում բացատրում են տնտեսական գործակալների տարբեր խմբերի շահերի անհամաձայնեցվածությամբ, մասնավորապես՝ «QWERTY» էֆեկտի ի հայտ գալը արտադրողների և սպառողների շահերի մասնակի անհամաձայնեցման արդյունք է: Արտադրողների նպատակը շատ և արագ վաճառելն է, ինչի համար էլ ստեղնաշարի վրա ընտրվել է տառերի ներկայիս դասավորությունը: Մինչդեռ սպառողների նպատակը փաստաթղթերի ձևակերպման որակի բարելավումն է և տպագրության արագության մեծացումը: Հաշվի առնելով նպատակների տարբեր համատեղելիությունը, ինչպես, օրինակ՝ չեզոքությունը, համատեղելիությունը, անհամատեղելիությունը և դրանց փոխգործողության էֆեկտի աստիճանի փոփոխությունները, արտադրողների (շատ վաճառել) և սպառողների (փաստաթղթերի ձևակերպման որակի բարելավում) շահերը կարելի է համարել համաձայնեցված: Սակայն ստեղնաշարի վրա տառերի դասավորվածության փոփոխության հաշվին, համադրելով վաճառքի քանակը տպագրության արագության հետ, այդ նպատակներն ակնհայտորեն դառնում են անհամատեղելի: Տվյալ դեպքում հայտնվելը կամ չհայտնվելը ծուղակում կախված է նպատակադրված արդյունքից: Եթե սպառողների շրջանում առաջնային չլինել շահը, ապա հնարավոր է, որ արտադրողները փորձեին գտնել տառերի այլ դասավորություն: Սակայն նպատակի երկակիությունը հանգեցնում է առաջնային պահանջարկի բավարարմանը և QWERTY - էֆեկտային ապրանքների արտադրության ընդլայնմանը, ինչն արդեն մասշտաբի էֆեկտի արդյունք է: Երկրորդ դեպքում ինստիտուցիոնալիստներն առաջ են քաշում կարճաժամկետ ու երկարաժամկետ որոշումների անհամաձայնեցման խնդիրը: Տվյալ դեպքում անհամաձայնեցումը կապված է «արդյունավետություն» հասկացության և ինֆորմացիայի ոչ լրիվության հետ: Քանի որ տնտեսական գործակալները տիրապետում են ոչ լրիվ ինֆորմացիայի (ինչպես, օրինակ, տեխնոլոգիայի զարգացման ապագա մակարդակի մասին), ապա այնքան էլ տեղին չէ տեխնոլոգիայի արդյունավետության մասին խոսելը:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ չնայած այս հիմնախնդրի շուրջ առկա տարակարծություններին, այնուամենայնիվ, ոչ այնքան արդյունավետ տեխնոլոգիական ինովացիաների երկարաժամկետ ընտրությունը պայմանավորված է գործող շուկայական ինստիտուտների ոչ լրիվությամբ: Տեխնոլոգիական տրանսֆորմացիայի վրա առավելապես բացասաբար է ազդում կապիտալի շուկայի անկատարությունը: Այս առումով տեղին է վկայակոչել Գ. Հաբբարդի այն միտքը, թե կապիտալի ժամանակակից շուկային տեղեկատվության անհամաչափության (ասիմետրիկության) հետ մեկտեղ բնորոշ են վատթարագույն ընտրության, բարոյական վնասի երևույթները [4]: Ֆինանսական սահմանափակումները՝ պայմանավորված կապիտալի շուկայի անկատարությամբ, հատկապես դրսևորվում են տնտեսության

բարձր տեխնոլոգիական հատվածի նկատմամբ, որն էլ արգելակում է ընդհանուր տնտեսական առաջընթացը: Այս երևույթը պայմանավորված է մի քանի պատճառներով: Նախ, կրեդիտորները, մասնավորապես բանկերը, ենթարկվում են բարձր ռիսկի, քանի որ բարձր տեխնոլոգիական ֆիրմաների կողմից առկա է որոշակի անորոշություն վարկի վերադարձման հարցում: Երկրորդ, քանի որ վարկառուներին բնորոշ է վարկերն ըստ նշանակության չօգտագործելու «բնական» շարժումները, ապա կրեդիտորները, որպես կանոն, հակված են ռացիոնալացնել վարկերի բաշխումը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է վարկառուների հետ կնքված պայմանագրերով նախատեսված հարաբերաբար ցածր ռիսկային նախագծերի փոխարեն բարձր ռիսկային նախագծերի ֆինանսավորմանը: Երրորդ, բարձր տեխնոլոգիաներում ինվեստիցիաների մեծ մասը, այդ թվում՝ բուն հետազոտությունների ծախսերը և հետազոտողների վարձատրությունը, չունի գույքային ապահովվածություն, որն էլ անխուսափելիորեն զգալի խոչընդոտ է դառնում ինչպես կրեդիտորների, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Բարձր տեխնոլոգիական խոշոր ընկերությունները՝ բավականին հաջողված առևտրական գործունեությամբ, շատ փոքրաթիվ են: Ի տարբերություն ֆինանսական, ապահովագրական, առևտրային և արդյունաբերական խոշոր ընկերությունների, բարձր տեխնոլոգիական ընկերությունները հենվում են սեփական կապիտալի վրա: Դրանով նրանք խուսափում են խոշոր կրեդիտորների, արտաքին և հնարավոր է, նաև անբարյացակամ ինվեստորներից առաջացող կախվածությունից: Պատահական չէ, որ այդ ընկերությունները համաշխարհային առաջնագծում են հիմնականում կապիտալացման ծավալով: Իր հերթին, ժամանակակից տնտեսության մեջ ինքնաֆինանսավորման կենտրոնացումը ենթադրում է հսկայական ֆինանսական ռեսուրսների կուտակում, որը, բնականաբար, բոլորին հասանելի չէ: Ինչպես ցույց է տալիս ժամանակակից բիզնեսի պատմությունը, դա հնարավոր է միայն շուկայում որոշակի դիրքի հասնելու դեպքում: Թերևս սրանով կարելի է բացատրել բարձր տեխնոլոգիական ընկերությունների կապիտալի առանձնահատկությունը կամ բացառիկությունը: Այս հարցում չի կարելի ուշադրություն չդարձնել բարձր տեխնոլոգիական ընկերությունների կապիտալի և բանկերի, խոշոր ֆինանսական կազմակերպությունների հատուկ «դաշինքի կամ միության» վրա: Վերջիններս նպաստում են ֆոնդային շուկայում բարձր տեխնոլոգիական ընկերությունների արժեթղթերի շահավետ տեղաբաշխմանը: Միևնույն ժամանակ, միջին հնարավորություններով բարձր տեխնոլոգիական ընկերությունները, որպես կանոն, ֆինանսական ռեսուրսների պակաս են ունենում, ինչն էլ պայմանավորում է մենեջերների՝ արդյունավետ ինովացիոն նախագծերի կատարման նախաձեռնության սահմանափակությունը: Սա արդեն նշանակում է կառավարության կողմից թաքնված կամ անուղղակի աջակցության անհրաժեշտություն: Այս առումով ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը առա-

վել ընդգծված է ոչ մեծ ներդրումային ֆիրմաներում: Այս դժվարության հաղթահարման հիմնական եղանակը ինովացիոն ֆիրմաների՝ սեփական կապիտալի մեջ վենչուրային ինվեստավորումն է, ինչը միայն վերջերս է սկսել կիրառություն գտնել շուկայում: Վենչուրային ինվեստավորման միջոցով ձեռք է բերվում և կառավարվում է ֆիրմայի սեփականությունը: Ինվեստավորման ֆինանսավորման այս ձևը ակնհայտորեն ենթադրում է ինովացիոն գործունեության մշտական մոնիթորինգ տնօրինողների կողմից: Հասկանալի է, որ ոչ մեծ ինովացիոն ֆիրմաների՝ միջինի կամ առավել ևս խոշորի փոխակերպման դեպքում վենչուրային կապիտալիստների կողմից այդ ֆիրմաների վերահսկողության հնարավորությունը զգալիորեն նվազում է: Միևնույն ժամանակ, անցնելով կապիտալի բաժնեմասնեցման սովորական ռեժիմին, առաջ է գալիս ֆինանսական ռեսուրսների անբավարար լինելու հիմնախնդիրը: Նկատենք, որ վերջինս չի սահմանափակվում տեխնոլոգիական ոլորտում ֆինանսական ռեսուրսների սահմանափակ առաջարկով: Այստեղ կարևորություն է ներկայացնում կապիտալի շուկայի կառուցվածքային խոր անկատարությունը, այդ շուկայի իստիտուցիոնալ ոչ լրիվությունը: Ժամանակակից պայմաններում տնտեսական առաջընթացի մեջ հիմնական ներդրում կատարում են ինովացիոն և բարձր տեխնոլոգիական հատվածները: Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս պարզ վիճակագրական հաշվարկները, եկամուտների հիմնական մասը բաժին է ընկնում տնտեսության ֆինանսական, մի շարք տրանսակցիոն հատվածներին, ինչպես, օրինակ՝ առևտրին, բանկային ծառայությունների և հանքային ոլորտին: Չի կարելի չխոսել նաև ֆինանսական մեքենայությունների մասշտաբների մասին, որոնց արդյունքում ձեռք են բերվում հսկայական շահույթներ՝ խոշոր կորպորացիաների արժեթղթերի գների տատանումների հաշվին, ինչպես նաև կորպորացիաների սեփական պարտատոմսերի ու արժեթղթերի ետգնման գծով դրամաշրջանառության մասին, որը մի քանի անգամ գերազանցում է ուղղակի ինվեստիաների իրագործման համար նոր թողարկվող արժեթղթերի էմիսիայի ծավալը: Տյույզերսային հումքային շուկաներում սպեկուլյատիվ գործառնությունների հետևանքով աճում է ավելցուկային ֆինանսական կապիտալի հոսունությունը, որի արդյունքում տնտեսության բարձր տեխնոլոգիական հատվածը կարծես թե յուրահատուկ «հարգանքի տուրք» է մատուցում ֆինանսական հատվածին: Հետևանքը լինում է բարձր տեխնոլոգիաների զարգացման ֆինանսավորման ռեսուրսների սահմանափակումը: Խոսքը հատկապես վերաբերում է ոչ առևտրային նախագծերի իրականացմանը, որն էլ իր հերթին կասեցնում է առաջադեմ տեխնոլոգիաների ընդլայնումն ու տարածումը: Մասնավորապես, չափազանց դանդաղ է տեղի ունենում էլեկտրամոբիլների և համաշխարհային օվկիանոսի ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիաների տարածումը:

Ինչ վերաբերում է ՀՀ ինովացիոն ոլորտին և տնտեսության բարձր տեխնոլոգիական հատվածին, ապա այստեղ ևս առկա է ֆինանսավորման աղբյուրների

սահմանափակություն, որն ավելի շատ պայմանավորված է 1990-ականների համակարգային ճգնաժամի պատճառով տեղի ունեցող տեխնոլոգիական հետընթացով: Նախկինի պես առկա է մասնավոր բիզնեսի, բանկերի կողմից ինովացիոն ծրագրերի և նախագծերի ինվեստավորման վարկավորման մերժումը: Սովորաբար բանկերը գործարար, ինովացիոն նախագծերի վարկավորումը դիտարկում են իբրև ռիսկային և այդ առումով խուսափում են դրանք ֆինանսավորելուց: Նկատենք, որ բանկերը կարող են սնանկանալ և այս պատճառով խստացնել վարկի հատկացման պայմանները: Թերևս սա է պատճառը, որ բարձր տեխնոլոգիական ֆիրմաներն անցնում են ռիսկային կամ վենչուրային ֆինանսավորմանը:

Այսպիսով, գլոբալ և ազգային տնտեսական հարթություններում ֆինանսական սուբյեկտների գերակայությունը տնտեսության ինովացիոն և բարձր տեխնոլոգիական հատվածներում հանգեցնում է կապիտալի հոսքերի սահմանափակմանը, ինչն էլ անհրաժեշտություն է դարձնում վենչուրային և բարձր տեխնոլոգիական հատվածների ինստիտուտների ու կապիտալի, գլոբալ ֆինանսական շուկաների ինստիտուտների միջև առկա կառուցվածքային հակասության լուծումը մոտակա կամ առնվազն միջնաժամկետ հեռանկարում:

Ժամանակակից պայմաններում խնդրահարույց են շրջակա միջավայրի ադապտումը, վառելիքա-էներգետիկ ռեսուրսների սակավությունը, ռուտի պատահական չէ, որ սպասվում է նոր, տեխնոլոգիական կացութաձևի գերակայություն (նոր արտադրություններ, նոր ճյուղեր, ցողունային բջիջների հիմքի վրա արհեստական ինտելեկտի ստեղծում, նոր տեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ և այլն) [5]: Կապված տեխնոլոգիական սպասվող փոփոխությունների հետ, ենթադրվում է գլոբալ կանաչ տրանսֆորմացիայի ծավալում, որն արդեն ենթադրում է համաշխարհային տնտեսության անցում ցածր ածխածնային և էներգաարդյունավետ ուղու [6]: Անդրադարձ կատարելով վերոնշյալ խնդրին, չի կարելի չխոսել հետևյալ հարցի մասին. կա տեսակետ, համաձայն որի տեխնոլոգիական տրանսֆորմացիան դիտարկվում է իբրև բիզնեսի բոլոր կողմերի վերակազմավորման միջոց, տեխնոլոգիական ինովացիոն գործընթացների ամբողջական միաձուլում բիզնեսի հետ: Ինչ խոսք, դժվար է վիճարկել բարձր տեխնոլոգիաների հսկայական հնարավորությունները ինովացիոն նախագծերի իրականացման գործում: Այնուամենայնիվ, սպառող ֆիրմաների կողմից առկա տեղեկատվության լրիվությունը վերաբերում է միայն մշակված և իրացման համար պատրաստ տեխնոլոգիաներին, բայց ոչ՝ չիրացված այլընտրանքային տեխնոլոգիաներին, որոնց մասին տեղեկությունը այն մշակողների կողմից պահվում է գաղտնի: Բացի այդ, պակաս կարևոր չէ այն, որ տեղեկատվական վերահսկողության մեթոդների կատարելագործումը բնավ չի վերացնում նորարարների և նրանց մշակումների՝ սպառողների միջև տեղեկատվության ասիմետրիայի հանրահայտ երևույթը: Ինովացիոն ֆիրմաների և նոր տեխնոլո-

գիաների մշակողների կողմից տեղեկատվության միտումնավոր խեղաթյուրումը հանդիսանում է բազմակողմ շուկայական խաղի բնական հատկանիշ, որը միջնորդավորում է առավել շահավետ, առաջին հերթին՝ ֆինանսական արդյունքների ձեռքբերումը:

Ինչ վերաբերում է մակրոմակարդակին (ազգային տնտեսություններ, համաշխարհային գլոբալ տնտեսություն), ապա կիրառվող և ներդրվող իրական տեխնոլոգիաների մասին տեղեկատվության անկատարության աստիճանը որոշակիորեն մեծանում է: Դրա հետևանքով մակրո- համակարգերում տեխնոլոգիայի նկատմամբ պահանջարկի և առաջարկի, այսինքն՝ ինովացիոն գործունեության արդյունքների առաջարկի միջև կառուցվածքային համապատասխանություն ձեռք չի բերվում: Այլ խոսքով, մոտ ապագայում տեխնոլոգիական տրանսֆորմացիան ըստ էության տեղի կունենա տնտեսական տրանսֆորմացիայից անկախ և ընդգրկված չի լինի տնտեսական տրանսֆորմացիայի մեջ իբրև վերջինիս ներքին բաղադրիչ: Տեխնոլոգիական տրանսֆորմացիոն փոփոխությունների հիմնախնդիրը ենթադրում է համակարգային լուծումներ, որն այլ բան չէ, քան տնտեսական համակարգերի շրջանակներում գործող ինստիտուցիոնալ մեխանիզմների կարգավորում: Ընդհանրապես, ցանկացած երկրի տնտեսական համակարգի գործունեությունը ենթադրում է հիմնարար ինստիտուտների համապատասխան կառավարում: Ինստիտուտները, որպես կանոն, ձևավորում են տնտեսության զարգացման տեխնոլոգիական հնարավորությունները և, բնականաբար, զարգացման ընթացքում դրանք փոփոխվում են: Մյուս կողմից, անհրաժեշտաբար հարց է առաջանում, թե ժամանակի և տարածության չափումներում ինչպիսի տնտեսական ինստիտուտներ պետք է ապահովեն տեխնոլոգիական հեղաշրջումները: Այս իմաստով հատկապես կարևորվում է բարձր տեխնոլոգիական խոշոր ընկերությունների դերը, որոնք թույլատրում են նոր տեխնոլոգիական արդյունքների իրացումից ստանալ բարձր շահույթներ: Ինչ վերաբերում է տեխնոլոգիաների գործնական մշակումներին, ապա այստեղ մեծանում է մանր ու միջին ինովացիոն բիզնեսի դերը: Անդրադառնալով վենչուրային ինստիտուցիոնալ մեխանիզմին, նկատենք, որ այն պետք է շահագրգռի ոչ կորպորատիվ ինստիտուտներին՝ շուկայական գործունեությամբ զբաղվելու գործում: Բոլոր դեպքերում, խոշոր կորպորացիաների և մասնավոր ոչ կորպորատիվ բիզնեսի ինովացիոն ներուժը սահմանափակ է: Անկատար շուկայական մրցակցության միջավայրում, որը բնորոշ է ժամանակակից տնտեսություններին, բարձր տեխնոլոգիական ուղղություններում առկա ռիսկը կարող է հանգեցնել բացասական կողմնակի էֆեկտների ի հայտ գալուն: Այստեղ արդեն մեծանում է պետության դերը. Նախ՝ պետությունն իրականացնում է ինովացիաների տնտեսական խթանման ակտիվ քաղաքականություն, մասնավորապես՝ պետական ծրագրեր, պետական-մասնավոր գործընկերություն, հարկային խթանների հատկացում, ինովացիոն

Ֆիրմաներին՝ հատկապես նրանց նախնական կապիտալի ձևավորման փուլում արտոնյալ վարկավորում: Չմոռանանք նաև տեխնոլոգիական խզվածքի հայտնի հիմնախնդրի մասին: Խոսքը վերաբերում է զարգացած և զարգացող երկրների միջև գնալով ավելի ու ավելի խորացող տեխնոլոգիական ճեղքվածքին, ինչի արդյունքում մեծանում է բարձր տեխնոլոգիական կորպորացիաների կապիտալի վերազգային կարգավորման պահանջարկը, որի նպատակը, ըստ էության, տեխնոլոգիական նվաճումների համաչափ տարածումն է: Վերազգային մակարդակով ակտիվանում է նաև տեխնոլոգիական քաղաքականության արտատնտեսական բաղադրիչը (տեխնաժին աղետներ): Այստեղ գործ ունենք ընդհանուր սոցիալական նշանակության տեխնոլոգիական ռիսկերի հաղթահարման հետ, որն արդեն համարդկային հիմնախնդիր է:

Ակնհայտ է, որ տնտեսության զարգացումը, տնտեսական աճը պայմանավորված են տեխնոլոգիական տրանսֆորմացիոն փոփոխություններով, որոնք, բնականաբար, ենթադրում են անուղղակի հետևանքներ: Մասնավորապես, խորանում է պայքարը շուկայական իշխանության և քաղաքական դաշտում ունեցած ազդեցության համար, ինչն էլ իր դրսևորումն է գտնում բարձր տեխնոլոգիական բիզնեսի և խոշոր ֆինանսական, բանկային կապիտալի միջև առկա հակասության խորացման մեջ: Վերջինիս լաժումն արդեն պահանջում է ազգային և վերազգային հարթություններում բարդ տրանսֆորմացիոն գործընթացների հասարակական կարգավորում՝ հաճախ գործունեության տեխնոլոգիական և տնտեսական ոլորտների սահմաններից դուրս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Норт Д.** Институты, институциональные изменения и функционирование экономики. – М.: Фонд экономической книги "Начала", 1997.-180с.
2. **Полтерович В.М.** Институциональные ловушки и экономические реформы. – М.: Российская экономическая школа, 1998.-37с.
3. **Есауленко Г.П.** Из опыта изучения экономики как структуры и процесса.- М.: ГУ ВШЭ, 2006.- Сер. Истоки. - Вып. 6. - 435 с.
4. **Hubbard, R. Glenn.** Capital Market Imperfections and Investment// Journal of Economic Literature.-March, 1998.-36.-P.195.
5. **Доклад корпорации RAND:** The Global Technology Revolution 2020, In-Depth Analyses. - N.Y., RAND Corporation, 2006.
6. **Доклад ООН** “О зеленой экономике: пути к устойчивому развитию”. - Женева, 2012.

М.К. АГАЯН, Г.С. ГРИГОРЯН, Г.А. МЕЛКОНЯН
О ВЛИЯНИИ ТРАНСФОРМАЦИОННЫХ ЭКОНОМИЧЕСКИХ
ПЕРЕМЕН

Рассматриваются вопросы влияния трансформационных экономических перемен на технологическое развитие. Позитивные экономические изменения определенным образом коррелируют с технологическими трансформационными сдвигами, которые часто вызывают экономические структурные качественные изменения. С другой стороны, влияние рыночных перемен на технологическое развитие может быть и негативным. В итоге усиливается внешнеэкономическая составляющая технологической политики, которая предполагает преодоление технологических рисков общего социального значения.

Ключевые слова: трансформационные экономические переменные, институциональная ловушка, технологические инновации, технологический риск, асимметрия информации, высокотехнологичный сектор, институциональный механизм, технологический разрыв.

M.K. AGHAYAN, G.S. GRIGORYAN, G.A. MELKONYAN
THE IMPACT OF TRANSFORMATION ECONOMIC CHANGES

The problems of the transformation economic change impact on the technological development are viewed. Positive economic changes are to a certain extent interrelated with technological transformation shifts often causing economic qualitative changes. On the other hand, the market changes may have a negative impact on the technological development. As a result, the extraeconomic component of technological policy enhances which implies a total transformation of social importance of the technological risk.

Keywords: transformation economic changes, institutional trap, technological innovations, technological risk, information asymmetry, high-tech sector, institutional mechanisms, technological fault.